**Արձանագրություն N 2**
**«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/48» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան 24 հոկտեմբերի 2022թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ե.Խաչատրյան

Լ.Հարությունյան

Քարտուղար՝ Դ. Միերյան

1. **«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/48»** ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2022թ. հոկտեմբերի 24-ին, ժամը 10:00-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էլեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է հոկտեմբերի 25-ին, ժամը 10:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուց հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Մ. Մկրտչյան 5 հասցեով, 809 աշխատասենյակում:

**«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/48» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան 25 հոկտեմբերի 2022թ.
ժամը՝ 11:00

6. **«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/50»** ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2022թ. հոկտեմբերի 25-ին, ժամը 10:00:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|---|
| 1 | Մերի Ավետիսյան Տիգրանի ԱՁ | ք. Աբովյան, Հանրապետության փ., շ. 12, բն.2, հեռ. +37493656548, |
| 2 | Մեդիա Սթրիմ ՍՊԸ | ք. Երևան, Դավիթ Անհաղթ 23, հեռ. +374 44227755 |
| 3 | Քլասթեր ՍՊԸ | ք. Երևան, Արաբկիր, Հ.Քոչար 17-30 հեռ. +374 098 000-693 |
| 4 | «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ | Տվյալներ ներկայացված չեն |

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Գնման առարկայի նախահաշվային գինը | Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)* | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Մերի Ավետիսյան Տիգրանի ԱՁ | | Մեդիա Սթրիմ ՍՊԸ | | Քլասթեր ՍՊԸ | | «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ | |
| | | | | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | |
| | | | | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | գովազդային ծառայություններ | դրամ | 1 | 3 950 000 | 2 400 000 | - | 2 796 375 | 3 355 650 | 2 869 375 | - | 7 500 000 | 9 000 000 |

- **Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն <<առանց ԱԱՀ>> սյունակը**

9. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է հանդիսանում.
Մերի Ավետիսյան Տիգրանի ԱՁ:

10. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ուղարկված հայտը համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

11. Ներկայացված հայտի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, **«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/48»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ճանաչել ընտրված մասնակից Մերի Ավետիսյան Տիգրանի ԱՁ:

12. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

13. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ ՝ ------------------------ Լ.Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝

------------------------ Ե.Խաչատրյան

------------------------ Լ.Հարությունյան

Քարտուղար՝ ------------------------ Դ. Միերյան